ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

**Օգոստոսի 2-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Տ. Հակոբ քհն. Գյոկչյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

**Օգոստոսի 9-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր աթոռում գտնվող Տ. Մեսրոպ քհն. Սարաֆյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:

* * *

**Օգոստոսի 16-ի-ն ,կիրակի.—Վերափոխումն Ս. Աստուածածնի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, օրվա մեծ տոնի առիթով ս. պատարագ մատուցեց Տ. Աբրահամ վրդ. Մկրտչյանը:

Հավարտ ս. պատարագի հանդիսավորությամբ կատարվեց խաղողի օրհնություն:

* * *

**Օգոստոսի 17-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Թադեոս աբղ. Զիրեկյանը:

Հավարտ ս. պատարագի կատարվեց հոգեհանգիստ՝ «վասն համօրէն ննջեցելոց»:

* * *

**Օգոստոսի 23-ին, կիրակի.**—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. խորանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել վրդ. Աջապահյանը:

* * *

**Օգոստոսի 30-ին, կիրակի.—Տոն գիւտի գօտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի:**

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մամիկոն աբղ. Քիլիճյանը: